ՀՈՎՀԱՆՆԵՍ ԻՆՃԻԿՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2013 թ. սեպտեմբերի 24-ին ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի նախաձեռնությամբ կայացավ ականավոր արևելագետ, գիտության կազմակերպիչ և պետական հասարակական գործիչ, պ. գ. դ., պրոֆ. Հովհաննես Գրիգորի Ինճիկյանի ծննդյան 100-ամյակին նվիրված գիտաժողով:

Գիտաժողովին բացման խոսքով հանդես եկավ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, ԳԱԱ թղթակից անդամ Ռուբեն Սաֆրաստյանը*: Նա նշեց, որ Հ. Ինճիկյանն ազգանպաստ ներդրում է ունեցել արևելագիտության, մասնավորապես, հայ թուրքագիտության ձևավորման ու զարգացման բնագավառում: Նա երկար տարիներ ղեկավարել է ՀԽՍՀ ԳԱ նորաստեղծ արևելագիտության սեկտորը, այնուհետև Արևելագիտության ինստիտուտը: Նրա օրոք հնարավորություն տրվեց անցկացնելու արևելագիտական ուղղությունների սահմանազատում և դասակարգում: Ռ. Սաֆրաստյանն անդրադարձավ նաև Հ. Ինճիկյանի գիտական ոլորտում ունեցած մեծ վաստակին և շեշտեց, որ նա հեղինակ է մի քանի արժեքավոր մենագրական ուսումնասիրությունների և մոտ 50 գիտական հոդվածների: Նրա «Օսմանյան կայսրության բուրժուազիան» հիմնական հետազոտությունը մինչ օրս չի կորցրել իր արժեքը: Արևելագիտության ինստիտուտի տնօրենը բարձր գնահատեց նաև ցեղասպանությանը նվիրված նրա «Ցեղասպանությունը և սոցիալական հոգեբանությունը» խորագրով գիրքը: Իսկ վերջում իր խորին երախտագիտությունը հայտնեց Հ. Ինճիկյանին, հիշեցնելով, որ վերջինս իր գիտական ղեկավարն է եղել:*

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց ԳԱԱ ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանը*: Վերջինս շեշտեց, որ Հ. Ինճիկյանն այն գործիչների թվին է պատկանում, որի կյանքն ու գործունեությունը հանդիսացել է իր հայրենիքին և հարազատ ժողովրդին ծառայելու համար: Նա փայլուն և ուսանելի օրինակ է սերունդների համար:*

«Խոսք գնահատանքի և հիշատակի» խորագրով նիստը բացվեց պ. գ. դ., պրոֆ. Վահան Բայբուրդյանի՝ *«Հովհաննես Ինճիկյանի կյանքն ու գործունեությունը» թեմայով զեկուցումով: Բանախոսը ներկայացրեց վաստակաշատ գիտնականի կյանքը և գործունեությունը: Նա նշեց, որ Հ. Ինճիկյանը Մոսկվայի պատմության, փիլիսոփայության ու գրականության ինստիտուտի շրջանավարտներից էր, 1939–1941 թթ. դասավանդել է Վ. Ի. Լենինի անվան ռազմաքաղաքական ակադեմիայում, 1941–1946 թթ. ծառայել է խորհրդային բանակում, մասնակցել Հայրենական մեծ պատերազմին: 1946 թ. զորացրվելով՝ Հ. Ինճիկյանը մինչև 1955 թ. գտնվել է պատասխանատու պաշտոններում ՀԽՍՀ*

Մինիստրների խորհրդին առընթեր Ռադիոյի պետական կոմիտեում, ՀԿԿ - Կենտկոմում և Հայաստանի Մինիստրների խորհրդի կառույցում: 1958–1971 թթ. զբաղեցնում է ՀԽՍՀ ԳԱ նորաստեղծ արևելագիտության սեկտորի վարիչի, իսկ 1971–1985 թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտի տնօրենի գիտական գծով տեղակալի պաշտոնները: Բացի այդ, Հ. Ինճիկյանն իր գիտական ու գիտակազմակերպչական գործունեությունը հաջողությամբ համատեղում էր դասախոսական աշխատանքի և հասարակական-քաղաքական ակտիվ գործունեության հետ: Զեկուցման վերջում Վ. Բայբուրդյանը նշեց. «Հ. Ինճիկյանը, այդ մարդկային ու քաղաքական հարուստ նկարագրով անհատականությունը, անկասկած, իր մշտամնա տեղն ունի մեր երախտավորների շարքում: Նրա առինքնող կերպարը և թողած անկորնչելի հիշատակը դեռ երկար կմնան նրա հետ շփված մարդկանց սրտերում»:

ԳԱԱ թղթակից անդամ Նիկոլայ Հովհաննիսյանն *էլ՝ «Պրոֆեսոր Հովհաննես Ինճիկյանը որպես գիտության կազմակերպիչ» խորագրով զեկուցման մեջ մանրամասն անդրադարձավ վերջինիս արևելագիտության ոլորտում կատարած աշխատանքին: Բանախոսը հիշեցրեց, որ Հ. Ինճիկյանը Արևելագիտության սեկտորը գլխավորել է 12 տարի, որի ընթացքում վերջինս մեծ փոփոխությունների է ենթարկվել: Նրա ղեկավարման տարիներին սահմանվեց հայ արևելագիտության հետազոտությունների աշխարհագրական տարածքը: Այդպիսին ճանաչվեց Մերձավոր ու Միջին Արևելքը և գլխավոր խնդիրը համարվեց այդ տարածաշրջանի երկրների ու ժողովուրդների պատմության, տնտեսության, մշակույթի, սկզբնաղբյուրների և միջազգային հարաբերությունների, հայ համայնքների ուսումնասիրությունը: Այդ շրջանակներում ավելի կոնկրետացվեցին անմիջական հետազոտության առարկա հանդիսացող ուղղությունները: Այդպիսին համարվեցին արաբագիտությունը, թուրքագիտությունը, իրանագիտությունը և քրդագիտությունը՝ իրենց ենթաբաժիններով ու բաղադրիչներով: Ն. Հովհաննիսյանը մատնանշեց նաև այն փաստը, որ Հ. Ինճիկյանի խմբագրությամբ պատրաստեցին և հրատարակեցին «Արևելագիտական ժողովածու»-ի առաջին և երկրորդ հատորները: Ավելին՝ զեկուցողը շեշտեց, որ այդ ժողովածուի առաջին հատորը հանդիսացել է հայ արևելագիտության յուրատեսակ մանիֆեստը:*

«Հայոց ցեղասպանության թեման Հովհաննես Ինճիկյանի աշխատություններում» խորագրով զեկուցման մեջ Թուրքիայի բաժնի ավագ գիտաշխատող Անուշ Հովհաննիսյանը *ներկայացրեց, թե գիտնականը ինչպես է ցեղասպանության թեման արծարծել իր «Օսմանյան կայսրության բուրժուազիան» և «Օսմանյան կայսրության անկումը» ծանրակշիռ աշխատություններում: Բանախոսը մանրամասն անդրադարձավ նաև «Սոցիալական հոգեբանությունը և ցեղասպանությունը» վերջին մենագրությանը, որն անվանի գիտնականն ուժերի գերագույն լարման գնով հասցրեց ավարտել մահից մի քանի շաբաթ առաջ: Ա. Հովհաննիսյանը նշեց, որ դա հույժ կարևոր, արդիական աշխատություն է, որի հրատարակումը նպաստեց ցեղասպանություն հասկացողության առավել լայն ըմբռնմանը, մարդկության դեմ ուղղված այդ վտանգավոր հանցագործության ու նրա գաղափարախոսների դատապարտման գործին: Բացի այդ, նա հիշատակեց այն փաստը, որ Եղեռնի հուշարձան կառուցելու գաղափարին անդրադարձել են պատմաբաններ Ծ. Աղայանը, Հ. Ինճիկյանը և Ջ. Կիրակոսյանը*

«Արևմտյան Հայաստանում հայերի զանգվածային բնաջնջման 50-ամյակի առթիվ միջոցառումներ անցկացնելու մասին» ՀԿԿ Կենտկոմ ուղարկած իրենց առաջարկությունում (1964 թ. հուլիսին):

Հ. Ինճիկյանի վերաբերյալ իրենց հուշերը պատմեցին Թուրքիայի բաժնի ավագ գիտաշխատող Ռեմ Ղազանջյանը *և պ. գ. թ.* Հակոբ Չաքրյանը*:*

Գիտաժողովի վերջում ներկաներին իր շնորհակալական խոսքը հայտնեց Հ. Ինճիկյանի որդին՝ Ռուբեն Ինճիկյանը:

Նույն օրը Թումանյան 35 հասցեում տեղադրվեց Հ. Ինճիկյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակ, որի տեղադրման մասին հրամանը ստորագրվել է Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանի կողմից դեռևս 2012 թ.:

ՔՐԻՍՏԻՆԵ **ՄԵԼՔՈՆՅԱՆ**